

Ոսկեգոծիկն գիւնն է 3 րուպ.

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽՐԻՄՈՒ

ՀԱՆԳԵՐՁ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՄԲԲ

ՋՆԱԽՆԻ ԵՒ ՋԱՅԺՄՈՒ ԲՆԱԿՉԱՅ ՏԱԻՐԻՈՅ,

ՇԱՐԿԱՐԵԱՅ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՏԷՐ-ՍԵՐԱ. ՀԱՄԵԱՆ.



Խրիմ թերակղզին, որ կրսուի նաեւ Տարխա, Հին եւ նոր աշխարհագէտներուն եւ պատմաբաններուն նիւթ եղած է շատ քննութեանց եւ ստորագրութեանց: Աշխարհագրական գիրքն ալ՝ օգոյն բարեխառնութեանը եւ երկրին բարեբերութեանը հետ միացած, պատճառ եղած են խիստ Հին ժամանակներէ ի վեր զանազան այլալեզու եւ այլաիրօն ազգաց եւ ժողովրդոց այս թերակղզոյս մէջ յաջորդաբար եւ երբեմն ի միասին բնակելուն. ուստի եւ հարկաւ սորա թէ աշխարհագրական եւ թէ պատմական տեղեկութիւնները ցանկալի են ամենայն բանասիրաց: Եւս առաւել ցանկալի եւ հետաքրքրական է սր եւ իցէ մերազնեայ ընթերցասիրին՝ Խրիմու պատմութիւնը, որովհետեւ Հինգ վեց հարիւր տարիէ ի վեր բնակարան եւ գրեթէ երկրորդ հայրենիք եղած է սա բազմաթիւ Հայ գաղթականաց Անեցւոց: Այս պատճառներով մեծապէս գովութեան արժանաւոր կտեսնեմք այս նոր աշխատասիրութիւնը, յորում հետաքնին հեղինակը ստոյգ գրուածքներէ հաւաքելով ամփոփեր է ընդհանրապէս Խրիմու վրայ եղած գիտելիքներուն գլխաւորները, եւ յատկաբար Խրիմեցի Հայոց Պատմութիւնը, վիճակագրութիւնը եւ սովորութիւնները: Եւ թէպէտ կարող են քննաբանք, ինչպէս որ հեղինակն ալ կգուշակէ յառաջաբանութեանը մէջ, մէջի նիւթերուն՝ եւս եւ ոճոյն վրայ հեղինակէն տարբեր կարծիք ունենալ, — ինչպէս օրինակի համար՝ օտարազգի յատուկ անուանց տառագարձութեանը վրայ, — այսու ամենայնիւ յուսամք թէ մեզի հետ կտեսնեն եւ կգովեն ընթերցողք այս գրքին բազմապատիկ կատարելութիւնները:

Թղթակազմ օրինակիկն գիւնն է 1 րուպ. 50 ֆոփ. արծ.

Լարակազմ օրինակիկն գիւնն է 2 րուպի արծ.

Ճանապարհի ծախսը հեղինակիկն վրան է